



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ի. ՄՈՒԶԱՆՈՎ

17.532

ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԸ
ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

ՊԵՏՎՐԱՏ

1931

ԵՐԵՎԱՆ

26 SEP 2006

15 JAN 2010

323.2:

Մ-36

մր

Կ. ՄՈԼԵԱՆՈՎ

ՎԵԱՍԱՐԱՐՆԵՐԸ
ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ



1931

ՀԵՐԵՎԱՆԻ ԱՆ

14925-17

04 JUL 2013

18532

ՀԱՍՏԱՏԻՎՐԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԾԱԽՈՒ
ԼՈԿԵՅԵՐԸ

ԹԵՏՈՐԱԾԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1791
ԳԼԱՎԼԻՏ 6710(Բ)
ՊԱՏՎԵՐ 4313
ՏԻՐԱԺ 3000

Վնասարար պրոֆեսորների ու ճարտարագետների
հակահեղափոխական կազմակերպություն — «Պրոմ-
պարտիայի» գատը բացեց վնասարարական այն ցանցը,
վոր դցել եյին նրանք մեր ժողովրդական տնտեսության
բոլոր ճյուղերում :

«Պրոմպարտիայի» դործի մեղադրական յեզրափա-
կումն ու մեղադրյալների ցուցումները դատի ժամա-
նակ վնասարարության մի նողկալի պատկեր բացին
Խորհրդային Միության բոլոր աշխատավորների ու ա-
րարաշխատների առաջ :

Վնասարարները կարողացել եյին մուտք գործել
նույնիսկ արդյունաբերության ու տրանսպորտի ղեկա-
վար մարմինների՝ Ժողովնակության Գերագույն Խոր-
հրդի ու հաղորդակցության ճանապարհների ժողո-
վրդական Կոմիտարիատի և պլանավորող գերագույն
մտքմնի՝ Պետպլանի մեջ:

«Տորգովորմե» (ապկայնացված ձեռնարկություն-
ների արտասահման փախած նախկին տերերի միացնող
կազմակերպություն) ցուցումներով ու կատարավո-
տական պետությունների ուազմական չափների հրա-

մաններով վնասարարներն աշխատում եյին կասեցնել
սոցիալիստական շինարարությունը, աստիճանաբար
քայլքայել մեր կարեվորագույն ձեռնարկություններն
ու նախապատրաստում եյին պատերազմ Խորհրդային
Միության դեմ:

Վնասարարներն հույս ունեյին ինտերվենտների ոգ-
նությամբ հակահեղափոխական հեղաշրջում առաջ բե-
րել յերկրում ու վերականգնել «նախկին յերանելի ժա-
մանակները»:

Նրանք կամենում եյին ձեռնարկությունները վե-
րադարձնել նախկին տերերին, հոկտեմբերյան հեղա-
փոխությունից հետո վերցված հողերի արժեքը վճարել
կալվածատերերին, հաստատել ուղղմական դիկտատու-
րա ու վողջ յերկրը հեղեղել հեղափոխական բանվոր-
ների ու գյուղացիների արյունով, վորպեսզի հետո նը-
րանց վոսկորների վրա հաստատեն բուրժուազիայի
հաճելի «գեմոկրատական հանրապետություն»:

Նոր կառավարության մեջ իրքեվ մինհստր մատ-
նանշվում եյին Խորհրդային Միության դեմ իրենց
արյունի արարքներով քաջ հայտնի սպիտակ գվար-
դիական գեներալներ Դենիկին ու Լուկոմսկին, գործա-
րանատեր Շյաբուշինսկին և ուրիշները:

Սոցիալիստական շինարարության հաջողություն-
ները, յերկրի ինդուստրացման արագ թափը, գյուղա-
տնտեսության վերակառուցումը նոր, սոցիալիստական
հիմունքներով, կոլխոզային շինարարության աճը, կու-
լակության վերացումը վորպես դասակարգի համատա-
րած կոլեկտիվացման հիման վրա,— այս ամենը ան-
հանդստացնում եյին միջազգային բուրժուազիային
ու նրա ծախու լակեր-վնասարարներին:

Փարիզում «Տորգարումը» կապիտալիստական պե-
տությունների ռազմական շտաբների հետ միասին մշա-
կել եյին Խորհրդային Միության դեմ ձեռնարկվելիք
պատերազմի մանրամասն պլանը, սահմանել եյին վո-
րոշակի ժամկետներ ու տվել վնասարարներին այդ պա-
տերազմի նախապատրաստության կայուն առաջադր-
բանքներ: Իրացնելով այդ պլանը, վնասարարները վեր-
ջին տարիներս տանում եյին լոտեսական ու քայլքայիչ
բուռն աշխատանք մեր արդյունարերության ու տրանս-
պորտի ասպարիզում:

Վնասարարական կազմակերպություն տրանսպորտում

Միջազգային բուրժուազիայի ցուցումներով պա-
տերազմ նախապատրաստելով Խորհրդային Միության
դեմ, վնասարարներն, իհարկե, առաջին հերթին աշ-
խատում եյին քայլքայիլ մեր ժողովրդական տնտեսու-
թյան հիմնական մասը տրանսպորտը, վոր առաջնա-
կարդ նշանակություն ունի պատերազմի ժամանակ:

Տրանսպորտի կազմալուծմանն ու քայլքայմանը վը-
նասարարներն առանձնապես բացառիկ ուշագրություն
դարձրին: Նրանք շա՞տ լավ հասկանում եյին, վոր
յեթե իրենց հաջողվի տապալել տրանսպորտի աշխա-
տանքներն, ապա նրանք հենց միայն դրանով ել զդալի
չափով հեշտացած կլինեն իմպերիալիստական գիշա-
տիչների հաղթանակը Խորհրդային Միության դեմ
ձեռնարկվելիք պատերազմում:

Տրանսպորտում վնասարարական կազմակերպու-
թյունների գլուխ կանգնած եյին ճանապարհների նախ-

կին տերեւն ու ակցիոներները*), վոր հույս ունելին պարձյալ իրենց ձեռը գցել հեղափոխությունից առաջ իրենց պատկանող յերկաթուղիները:

Ահա թե ովքեն ելին զեկավարում տրամադրությունը վնասաբարությունը:

ՖՈՆ-ՄԵԿԼ-ՄՈՆԿՎԱ-Կաղանյան յերկաթուղունակին տեր, հետո նույն յերկաթուղուն խոշորագույն փայտեր և զեկավար-դիրքեկտոր: Խորհրդային իշխանության ժամանակ նա վարում էր հաղորդակցության ճանապարհների ժողկոմի գլուխավոր կոնսույլատանտ (խորհրդատու) — եկոնոմիստի պաշտոնը, իսկ հետո դարձավ նույն ժողովրդական Կոմիսարիատի կենտրոնական պլանային վարչության տնտեսական սեկցիայի նախագահ:

ԲՈՐԻՍՈՎ — տոհմական աղնվական, ցարական կառավարության ժամանակ հաղորդակցության ճանապարհների մինիստրի որդինական, Մեսկվա-Կաղանյան յերկաթուղուն խոշոր փայտեր, Խորհրդային իշխացության ժամանակ մի քանի տարի վարիչ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի տեղակալի պաշտոնը:

ԿՐԱՍՈՎԾԿԻ — Նույնպես Մոսկվա-Կաղանյան յերկաթուղուն խոշոր փայտեր: Զերբակալման մոմենտին նա հաղորդակցության ճանապարհների ժողկոմիստրիտի կենտրոնական-պլանային վարչության տեխնիկական սեկցիայի նախադահն էր և յերկաթուղային տրամադրութիւն կենտրոնական վարչության քարչի (տյառդի) բաժնի պետ:

Բացի այս, վնասաբարարական ցանցը լայն կերպով

*) Ակցիոներ—փայտեր արդյունաբերական ու տնտերական գնունարկներում:

տարածված էր ճանապարհների վարչությունների մեջ: Տրամադրություն կերպով խճճված էր վնասաբարության ու վոստայնով:

Հակահեղափոխության կեղտուող գործն տրամադրություն իրացնելով, վնասաբարներն ամեն բովեւ ի նկատի ունելին և իրենց անձնական շահը: Նրանք ամեն միջոց ձեռք ելին առնում, վորպեսզի վորքան կարելի յել լավ ամրացնեն մասնավոր յերկաթուղիները, վոր առաջ պատկանում ելին իրենց: Նրանք այնքան ելին լրացել, վոր իրենց արդեն համարում ելին դրության տեր:

Ահա թե ինչ է ասում վնասաբարներից մեկը՝ ճարտարագետ ՇԱՆՈՎԾԻ. «Մեր կազմակերպությունը նախիլն մասնավոր յերկաթուղիների վարչությունների անլեղալ խորհրդի ֆունկցիաներն եր կատարում: Մյուս ուղղությամբ մեր կազմակերպությունը գործում էր ուժեղացնելով նախկին մասնավոր յերկաթուղիները (ընդգծումը մերն ե: ի. Մ.), ինչպես մատակարարելով նրանց նյութեր ու դրամական միջոցներ, ի վնաս ճանապարհների մնացած ցանցի, այնպես ել համապատասխան կերպով կարգավորելով յերկաթուղիների ցանցը: Մասնավոր յերկաթուղիներին ուժեղ կերպով մատակարարում ելին շարժական կազմ: Կազմանի ճանապարհն ստացավ չողեմեքնաների ապրանքային պարկ նոր «Թ» սերիաներից, Կիե-Վորոնիժյան և Հարավ-Արևելյան ճանապարհներն ստացան նոր չողեմեքնաների պարկ «ԾՎ» սերիայի, իսկ նրանց «Է» սերիայի չողեմեքնաներն ուղարկեցին Տաշքենոսի, Միջն-Ասիական և Անդրկովկասյան ճանապարհների վրա: Կազմանի ճանապարհն ստացավ մի քանի հարյուր մարդուար:

Մեկկերը. Բողէսովիները, Կրասովսկիներն ու մյուս-
ներն աչալուրջ հետեւում եյին նախկին մասնավոր ճա-
նապարհների դրությանը, վորոնք հույս ունեցին հետ
ստանալու և միաժամանակ բարբարոսաբար քայլա-
յում եյին Խորհրդային տրանսպորտը :

Վնասարարների պլանները

Ի՞չո՞ւմն եր կայանում վնասարարությունը տր-
րանսպորտում, ի՞նչպես եր կիրառվում այն և թե
ի՞նչ պլաններ եյին նախագծված այդ ուղությամբ,
—այս բոլորի մասին մանրամասն պատօնեցին հենց
իրենք վնասարարները, նրանից հետո, յերբ բոնվեցին
հանցանքի մեջ Պետքադպաշտության մարմինների ձեռ-
քով ու բանտարկվեցին :

Ուտագործման պիտանի շոգեմեքենաները փչացնե-
լու մասին, որինակ Դմոխովսկին ասում է հետեւյալը.

«Կար վնասարարություն, վոր ուղղված եր շոգե-
մեքենաների պարկի այսպես ասած Փիզիքական կոր-
ծանմանը, վորին պետք է վերազգբել շոգեմեքենաների
վերամսորոշման և զվարապես յերկարատեղ ու լու-
թացիկ վերամորորդման բարձի թող անելը. Ինչենարից
հանելն ու լոմերի (անպետքների) շարքը դասելն այն-
պիսի շոգեմեքենաների, վորոնք դեռ պիտանի յին աշ-
խատանքի ու հարկավոր յերկաթուղային արանսպոր-
տին»: Յեվ այսուհետեւ նա շարունակում է. «մեր հա-
կահեղափոխական կարմակերպությունը շոգեմեքենա-
յին պարկի վնասարարության այլ խնդիրների թվում
գրել եր նաև շոգեմեքենաներին պահեստի մասեր մա-
տակարարելու գործը չարամիտ կերպով կազմակուծելու
հարցը»:

Վնասարարները կասեցնում եյին վառելանույթի
քաերլավման ու խնայողաբար ողտագործելու աշխա-
տանքն, արհեստական կերպով պայմաններ եյին ստեղ-
ծում գերայրման համար: Նըանք արգելակներ եյին
ստեղծում շոգեմեքենային ունակության զարգացմանն
այնպիսի կարելորադույն դերում, ինչպիսիք են Դոն-
բաս-Մուկվան, Կուգբաս-Ալբալը, և այդպիսով վտան-
գի յենթարկում վառելանյութերի մատակարարման
խնդիրները: Վնասարարները կազմում եյին մարդատար-
գնացքների համար հատուկ վնասարարական չվացու-
ցակներ և ստեղծում արհեստական արգելակներ սպ-
րանքատար գնացքների համար:

Բայց այսքանն ել քիչ եյին համարում վնասա-
րարները: Երանք միջոցներ եյին ձեռք առնում, վորպես-
զի ավելորդ տեղը փողեր ծախալեն արտասահմանում
անպետք սարքավորումներ ու դադյահներ զնելու վրա:
Այդ զնումներով ստացված դադյահներն ու սարքա-
վորումը սովորաբար չեյին ոգտագործվում ու տարինե-
րով թափած եյին մնում բաց յերկնքի տակ:

«Մեր կազմակերպության անդամների այն ե՝ Վա-
նիքատելի, Շուկովի, Ֆեղորովի, իմ, և Յանուչելիսկու
կազմած ու մշակած հեռանկարային ոլլանները—ասում
ե վնասարար կրասովսկին, —սիալ եյին: Այդպիսի սը-
խալ պլաններ կազմելով մեր կազմակերպությունը ձգ-
տում եր հետեւյալ նախառակներին՝ 1) պետքունից
պահանջել չափաղանցացլած դրամական միջոցներ և
գրանով կազմակուծել պետական բյուջեն, հրաժարվե-
լով արանսպորտի ներսում միջոցներ հայթայթել. խան-
գարել տնտեսելու (եկանոմիայի) ուժիմը, 2) պակասե-

ցբած չափանիշներ ցուցադրելով. թագցնել կազմակեր-
սրության անդամների (վնասարարների) քայլացիչ,
կաղմալուծիչ աշխատանքը; 3) մոտակա տարիներում
տրանսպորտային տնտեսության զանազան ճյուղերի
մեջ առաջ բերել անհամաշակություն»:

Վնասարարների գործողությունների այս միանդա-
մայն թերի թվարկումից անդամ պարզ յերեվում ե, թե
իշխան մեծ եր նրանց կործանիչ աշխատնաքը տրանս-
պորտում:

Վնասարարներն իրենց հանցալով գործողություն-
ներով չափազանց մեծ վնասներ հասցըն մեր ժողովր-
դական ամբողջ տնտեսության և առանձնապիս ահա-
գին վնասներ պատճեցին տրանսպորտին: Քննու-
թյամբ պարզված ե, վոր հենց միայն «ՕՐ» սերիայից
ոգտագործման միանդամայն պիտանի 800 շոգեմեքենա-
ներ ջարդված են ու դասված լոմերի (անոլետքների)
չարքը: Բացի այդ լոմերի շարքն են դասված մեծ քա-
նակությամբ շոգեմեքենաների պահեստի պիտանի մա-
սեր:

Վնասարարների աշխատանքների ձեվերից (պրիոր-
ներից) մեկն ել այն եր, վոր ամեն կերպ թագցնում ելին
շոգեմեքենաների պարկի խսկական դրությունը հաղոր-
դակցության ձանապարհների ֆողովդական կոմիսար-
քիստի զեկավար մարմններից: Վնասարարները նվա-
զեցրած տեղեկություններ ելին տալիս հիվանդ շոգեմե-
քենաների մասին և այդ սուտ տեղեկություններով թագ-
ցնում իրենց քայլացիչ շխատանքը: Տրանսպորտում
վնասարարությունը բացվելուց հետո, շոգեմեքենանե-
րի դրության մանրագննին քննությունը պարզեց, վոր
սահմանամերձ կարեկորագույն ճանապարհների վրա չո

գեմեքենաների գրեթե ամբողջ սառը պահեստն ան-
կարգ դրության մեջ է: Պաշտօնապես ճանապարհների
ամբողջ ցանցի վրա հիվանդ չողեմեքենաների թիվը
հաշվում եր 20 տոկոս, մինչդեռ փաստորեն ստուգման
ժամանակ հայտնիեց, վոր 28 տոկոս է, իսկ առան-
ձին ճանապարհների վրա հիվանդ շոգեմեքենաների տո-
կոսն հասնում էր հոկտեմբերի—35-36-ի: Ամե-
նուրեց սոսկալի կերպով բարձի-թող եր արած շոգե-
մեքենաների միջին ու ընթացիկ վերանորոգումը:

Քիչ վնասներ չեր հասցված տրանսպորտային և
մյուս ճյուղերում:

Վնասարարների յեվ ոպորտոնիստերի ծրա-
գիրները խորակված են

Սակայն չը նայելով ճարտարագետ ու պրոֆեսոր
անունը կրող այլ «կուլտուրական» վնասարարների բո-
լոր կործանիչ գործողություններին ու դիտավորու-
թյուններին, նրանք անզոր հանդիսացան կառեցնելու
սոցիալիզմի հաղթական կառուցումը, վոր իրացվում է
միլիոններից կազմված բանվորական մասսաների ձեռ-
քով:

Կուսակցության և բանվոր դասակարգի աչալլիու-
թյունը, հեղափոխության հավատարիմ պահակ Միաց-
յալ պետքաղվարչության աչալլիությունը կարողացավ
ժամանակին խափանել վնասարարների բանդաների հան-
ցավոր աշխատանքն, հնարյավորություն չուալ նրանց
լիովին իրագործելու նշված պլանները: Ինչպես հայտնի
յե ամենից առաջ քարածուխի արդյունաբերության մեջ
բացվեց վնասարարական կազմակերպություն, ապա

1929 թվին տրամսպորտում բացվեց հակահեղափոխական կաղմակերպություն : Այնուհետեւ վնասարարություն բացվեց արդյունաբերության մի շարք այլ ճյուղերում և վերջապես 1930 թվին ձերբակալվեց վնասարարների շտարը՝ «Պրոմ պարտախայի» կենտրոնը :

Բանվորական լայն մասսաների մեջ վնասարարները վոչ մի ազգեցություն չունեցին և չեյին կարող ունենալ : Նրանք հենվում եյին լոկ ճարտարագիտական-պրոֆեսորական արտոնյալ բուրժուազիայի վերին կազմի վրա :

Խորհրդային իշխանության տապարումը հետապնդելով, նրանք յերկրի ներառում ուժեր չունեցին դրա համար, այդ պատճառով ել այդ գործում իրենց ամբողջ հույսը դրել եյին բացառապես միջազգային բուրժուազիայի թնդանոթների ու գնդացիրների վրա :

Սակայն չի կարելի աչքերը փակել և այն հանդամանքի առաջ, վոր բանվոր դասակարգի մեջ ևս, նրա ամենաանդիտակից մասում, և մինչև իսկ կուսակցության շարքերում գտնվեցին առանձին մարդիկ, վորոնք իրենց գործողություններով որդիկավորեն ջուր եյին լցնում հակահեղափոխական վնասարարության ջրաղացին :

Վերհիշենք ի՞նչ եյին խոսում վերջին տարիներս աջ ուղղառնիստները : Նրանք առաջարկում եյին չըշտապել կորոնտեսություններ ու խորտնտեսություններ կազմակերպելու, յենթաղրելով թե ծածկել հացի պակասորդը յերկրում ու հումուրթ ստանալ արդյունաբերության համար կարելի կլինի գյուղի ունեցոր ու կուլակային անտեսությունների հաշվին : Աջ սպորտունիստները, վոր գլխավոր վտանգն են հանդիսանում

ավլալ ետապում, առաջարկում եյին չըտապեցնել արդյունաբերության դարպացումը, հրաժարվել յերկրի բնույթաբացման արագ տեմպերից, չը նեղել մասնավոր առելքտրի ու արդյունաբերության դարպացումը : Մէ փոքր այլ ձախով, սակայն լսու եյության նույնու եյին կրկնում ու ձայնակցում աշերին հակահեղափոխական տրոսցկիստներն ու այսպես կոչված աջ-«ձախ» յերկերսանիները :

Այժմ «Պրոմ պարտախայի» պլոտեսում մեղադրյալների ցուցումներից ամենքին հայտնի յերգեն, վոր վընասարարներն իրենց հմտնական նպատակ դրել եյին ամեն տեսակի միջոցներով կատեցնել սոցիալիստական շինարարությունն ու ամեն կերպ ամրագնդել քաղաքի կապիտալիստական մասն, իրենց հմտնական բազա Խորհրդացին իշխանության դեմ կովկելու համար : Վնասարարներն ամեն կերպ խրախուսում ու աջակցում եյին աջների խորհրդացին յերկրի համար կործանիչ քաղաքականությանն ու մղում նրանց ոպորտունիստական փթած ուղիով :

Իրենք պարզ որինակներից մեկը կարելի յե մատնանշել կուրսակի յերկաթուղու Մասկվա և հայարանի կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունների աջ ոպորտունիստական պլանական : Բավական յերկար ժամանակ այնտեղ խայտառակ կերպով խեղաթյուրվում եր կուսակցության գլխավոր զիջը : Կուսակցական Կոմիտեյի զեկավարները խափում եյին կուսակցությանն ու պարապում յերկերեսանիությամբ :

Խորըվ ու բանաձեռվ նրանք խաչ եյին բարձրացնում կուսակցության գծի համար, իսկ գործով տանում եյին սոցիալիստական շինարարությունը քայլացող քարագալում

զաքականություն։ Նրանց առաջադրված չափանիշները չելին կատարվում վորպես կանոն, սոցմբառումն ու հարավածայնությունը դոյլություն ունեցին միայն թղթի վրա։ Լայն կերպով զարգացած եր նրանց մոտ տնավարությունը, գոյություն ուներ փոխադարձ յերաշխավորություն թագնելու թափիվաճներին ու աշխատանքային դիսցիպլինան խանդարողներին, կատադի կոփ եր մզկում բացինալիզատորական միջոցառումների դեմ։ Յեկայն ամենին լրացնում եր հակահեղափոխական տրոցիկստական կազմակերպությունը, այսպես կոչված «փոխադարձ ողնության դրամարկղ», վորն ողնություն եր ցույց տալիս ձերբակալված ու ազորված տրոցիկստներն, աշխատանքի դիսցիպլինայի չառանենգ խախտողներին ու խորտակումների հանցալորերին։

Տեղական կուսակցական կազմակերպությունների դեկանալիներն այս ամենը քաջ գիտնալով հանդերձ, վո՛չ միայն չելին կովում բոլոր յերեւլույթների դեմ, այլ հենց իրանք ելին այդ զործերին ակտով մասնակցություն ցուցաբերում։ Կուսկոմի նախկին գլխավորող Յերմակովը, Լուկիսովին ու Արքամիկինը նույնիսկ իրենք անդամ ելին այդ հակահեղափոխական «դրամարկղներ»։ Յեկայն սրանով աջակցում ելին նրանք վնասարարներին, քայլաբյուռ մեր ամենակարեվոր յերկաթուղային դժերից մեկը, վոր միացնում ե հարավը կենտրոնի հետ։

Այդպիսի դեկավարության գոյությունը Մոսկվա Հայարանում հակայտական վնաս պատճառեց կուրսկի համապարհում։

Կուսակցությունն ու նրա մարտական շտաբ՝ Համ-

կ (բ) կ կենտրով անինա կերպով մերկացնում ելին աջ ու «ձախ» ոսղորտունիստների քաղաքականությունը։ Առիվիզացիայի յենթարկելով բանվորների դասակարգային զգացությունը, կուսակցությունը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում ծավալեց սոցիալիստական շինարարության չտեմպած տեմպեր ու բույր աշխատավորների ուշադրությունն, եներգիան ու նախաձեռնությունը մորթիվզացիայի յենթարկեց իրացնելու շինարարության նախանշված տեմպերը։

Մարտական խնդիրներ տրանսպորտի աշխատանքում

Մեր յերկրի բանվոր դասակարգն հսկայական հաջողականությունների յե հասել սոցիալիստական շինարարության մեջ։ 1930 թվին, փոխանակ կրիզիսի, ինչպես ըսպասում ելին վնասարարները, մենք տեսնում ենք մեր տնտեսության հսկայական աճում։ 1929-30 թվին արդյունաբերության արտադրանքն ավելացել է 1928-29 թվինի դիմաց 25 տոկոսով և յերկու անգամ գերազանցում է մինչպատերազմյան արտադրանքից։ Ներդրվում են հսկայական միջոցներ արդյունաբերության մեջ, բայն կերպով ծավալվում արդյունաբերական նոր դիմանաների կառուցումը։ Այս տարվա համար նշված ե արդյունաբերական արտադրանքի աճ 45 տոկոսով։ Հընդումյակը կկատարվի չորս տարում, իսկ գլխավոր ճյուղերում՝ նույնիսկ յերեք տարում։

Յերկաթուղային տրանսպորտում նույնուես մենք ունենք մի շարք նվաճումներ, վորնց մասին կարելի յե դատել այն բեռների քանակից, վոր փոխադրվել են վեր-

Հին տարիներս : 1926-27 թվին փոխադրվել է 136 միլիոն տոնն բնոր, վոր մինչպատերազմյան փոխադրությունից գերազանցում է 3 տոկոսով : 1929-30 թվին մեր յերկաթուղիները փոխադրել են 238 միլիոն տոնն, իսկ 1931 թվի համար յերկաթուղային տրանսպորտով փոխադրելու նշված է 330 միլ. տ. ամեն տեսակ բնոներ, վոր յերկու և կես անգամ գերազանցում է 1913 թվին փախադրված բնոների քանակից :

Սակայն, չը նայելով այս անլիճելի ու մեծ նվաճումներին, վերջին ժամանակներս տրանսպորտն սկսել են չափազանց հետ մեջ ժողովրդական տնտեսության մյաւս նյութերից ու քերաբար առաջադրվող փոխադրությունների մեջ : Տրանսպորտը մեր ժողովրդական տրնտեսության զարգացման ասպարիզում դարձել է նեղ տեղերից մեկը : Ահա որիակներ՝ հունվար ամսու 20 որվա մեջ 300 հազար վագոն սպակաս և բեռնավորվել նըշված քանակից, վորտեղ 60 հազար վագոն անտառանյութեր, 66 հազար վագոն հանքային վառելնայութեր, 60 հազար ցիստերն նավթ, և այլն : «Գուրգոկն» իր 1931 թվի փետվարի 7-ի համարում դրում է՝

«Այսոր տրանսպորտի հանցանքով յերկիրը պակաս ստացավ հայ՝ 2414 վագոն, քարածուխ՝ 4266 վագոն, նավթ՝ 767 ցիստերն, հանքերն, հանքեր 694 վագոն» :

Յեկ քիչ չեն մամուլի նման հաղորդագրությունները :

Փոխադրության այս անբարեհաջող դրությունն ուժեղ կերպով ազդում է սոցիալիստական ամբողջ շինարարության վրա : Ակնհայտ կերպով քեկոնստրուկտիվ միջոցառումները տրանսպորտում հետ են մնացել ար-

դյունաբերության մնացած ճյուղերի համեմատությամբ : Վասարաբության հետեւանքներ ուժեղ կերպով իրենց ազդեցությունն ունեցան տրանսպորտի աշխատանքների վրա : Դրա հետ միասին յերկաթուղայինների մեջ վերջին ժամանակներս առաջացած աշխատանքային գեղացիալինայի խիստ խանգարումը ու տըրանսպորտի մի չափ վարչական ու տեխնիկական աշխատավորների, ինչպես և հասարակական կազմակերպությունների անկարողությունը սոցիալիստական տրանսպորտի մեջ աւելի կերպով խանգարում են նրա աշխատանքի բարեկալմանը :

Կուսակցության կերպով և կվաշի գեկտեմբերյան պլանումը բացառապես մեծ ուշադրություն դարձրեց տըրանսպորտին :

Պենումը տվեց կայուն դիրեկտիվ՝ «...բանվոր դասակարգի ու նրա կուսակցության առանձին հսկողությա տակ առնելու... ժողովրդական տնտեսության նեղ տեղերից մեկի հաղթահարումը՝ յերկաթուղային և ջրարային արանսպորտի» և իրերվ կարելորադույն ինդիբրդուց՝ «վճռական կերպով առաջ քաշել տարնսպորտը հասցնելու այն սպահանջների մակարդակին, վոր զնում և նրա առաջ ժողովրդական տնտեսության հիմնական ծյուղերի բուռն զարգացումը» :

Իրագործելով այս դիրեկտիվները ԽՍՀՄ-ի ժողովագործն ու Համ . Կ(Բ) Կ կետկամը իրենց սույն տարավա հունվարի 15-ի դիմումի մեջ նշեցին մի շափ գործնական միջոցառումներ տրանսպորտի ճեղքածքները լուծարել յենթարկելու ու նրա աշխատանքները բարեւամբերությունը :

Այս տարի տրանսպորտի արժեկու յէ և 60 հազար



ապրանքատար նոր վագոններ ու հազարից ավելի նոր շողեմեքենաներ : Բայց են թողնվում հսկայական նյութական ու դրամական միջոցներ տրանսպորտի ընկոնստրուկցիայի համար : Ժողոտնտեսության գեղագույն խորհրդին առաջադրված ե լիապես ու ժամանակին տրանսպորտն ապահովել շողեմեքենաների համար անհրաժեշտ օգաճեստի մասերով :

Երկաթուղայինների առաջ դրված ե իրեվ մարտական խնդիր՝ բարելավել շողեմեքենային պարկի դրսորհըն առաջադրված ե լիապես ու ժամանակին ու հոգատար կերպով կատարել շողեմեքենաների ընթացիկ վերանորոգումը, կրծատել ժամկետներն ու բարելավել շողեմեքենաների ինչպես միջին, նույնպես և հիմնական վերանորոգման վորակը, կանոնավոր կերպով կատարել շողեմեքենաների լվացումը և պատշաճ բարձրության վրա դնել նրանց ինսամքն ինչպես շողեմեքենային բրիգադների այնպես ել դեպոյի աշխատավորների կողմից :

Շողեմեքենային բրիգադների դիմադրությ յերթենեկությունը փոխարինվում է զուգակցված ու կազմակերպված յերթեկությամբ*): Առաջադրված է մի ամպավա ընթացքում վառելանյութերի փաստացի դործածությունն իջեցնել վոչ պակաս քան 15 տոկոսով : Շարժական կազմը լավագույն կերպով ուղարկործելու համար փոխադրության մեջ մտցվում ե ավելի մեծ պըլանաչպություն :

*) Զուգակցված ու կազմակերպված յերթեկությունն այն կտրգն ե, յերբ յուրաքանչյուր շողեմեքենայի սպասարկում են յերկու կամ յերեք բրիգադներ :

Բացի այս գանազան կազմակերպություններից ու արտադրություններից արանսովորան են վերագառնում յերկաթուղայինների հին կադրերը : Ավելացվում ե շողեմեքենային բրիգադների ու շողեմեքենաները վերանորոգով բանվորների աշխատավարձությունը աշխատանքի վարձատրության սիստեմը կազմվում ե այնպես, վոր նրանք անմիջապես շահագրգույթած լինեն աշխատանքի արտադրողականության բարձրացմամբ ու շողեմեքենաների գովածին:

Տրված են կայուն առաջադրանքներ յերկաթուղայինների համար, նորից վերականգնվում են տրամապորտային կոռուպտացիայի մարմինները : Բոլոր յերկաթուղայինների առաջ մարտականորեն դրված ե աշխատանքային դիսցիպլինայի բարձրացման ինդիքը :

Ավելի աջակրցություն

Ներկայիս տրանսպորտի բոլոր աշխատավորների առաջ կանգնած են հսկայական ու պատասխանատու խնդիրներ, վորոնք պատմական մեծ նշանակություն ունեն—հենց մոտիկ ժամանակներում վճռական բեկում առաջացնել տրանսպորտի աշխատանքներում, վերջնականապես լուծարվել յենթարկել ճեղքվածքները փոխադրության ասպարիզում և դուրս բերել արանապորտը դեպի սոցիլախտական շնարարության լայն ուղին :

Կուսակցության ու կառավարության կողմից 1931թ. համար ընդունված ժողովրդական տնտեսության կողմից պլանը պետք է իրագործվի և հենց դրանով ել պետք է ավարտի սոցիալախտական եկոնոմիկայի հիմքի կառուցումը մեր յերկրում :

Պետք ե մոբիլիզացիայի յինթարկել բոլոր ուժերը, վորպեսզի արանսպորտն համաքայլ ընթանա մեր վողջ անտեսության զարգացման հետ ու լիազես ապահովի նրա բուռն աճումը:

Այս պատասխանատու մոմենտին մենք չը պիտի մոռանանք վնասարարության դասերը: Պրոլետարական ուժեղ ձեռքով վնասարարները խորտակված են: Երանք մերկացված են համայն աշխարհի աշխատավորության առաջ, մերկացված են նաև Խորհրդային Միության աշխատավորների դեմ պատրաստվող պատերազմի խմբերին ականները: Սակայն, այդ բնակչ չի նշանակում թե վանսարարությունը վերջնականապես լուծարքի յե յինթարկված ու մեր դեմ պատերազմի վատանդն անցել է իսպառ: Մենք մեջաւ պիտի հիշենք, վոր ըջապատված ենք գտանկարգային թշնամիներով, վոր թշնամին զանազան միջոցներով ու ձեւերով կատաղի կոխվ ե մղում մեր դեմ: Նա հաճախ սղոսկում է մեր մեջ ու մեղ համար աննկատելի կերպով քայլայիշ աշխատանք տանում մեր անտեսության մեջ:

Առանձնապես մեծ ե այդ վտանգը արանսպորտում: Վերջնականապես մաքրել արանսպորտը վնասարարարերից—չափաղանց գժվարին զործ և և անշուշտ վնասարարների չհայտաբերված գործակիցներից դեռ մնացել են տրանսպորտի մեջ: Ընդ սմին յերկաթուղարքների մեջ քիչ չեն այնպիսիք, վորոնք գյուղում ունեն կիսակուլակային ուժեղ տնտեսություն և հանդիսանում են կուլակային ագենտուրա բանվոր գասակարդի մեջ: Կղտնվեն նաև նախկին կուլակներ, վորոնց գյուղում կուլակաթափ են արել կամ հենց իրենք կարողա-

ցել են լուծարքի յինթարկել իրենց տնտեսություններն ու տեղափոխվել տրանսպորտի վրա: Այդպիսի մարդիկ, իհարկե, թշնամարար են տրամադրված դեպի բանվոր գասակարգն ու հավատարիմ ոգնականներ են հանդիսանում վնասարարներին տրանսպորտը քայլայելու գործում: Նրանք զբաղված են նրանով, վոր տարածում են զանազան հակածեղափոխական հնձարքներ, աշխատում են գժողություն սերմանել բանվոր դասակարգի մեջ, իանգարում են աշխատացիպլինան և մինչեվ իսկ կատարում են վնասարարության ակտեր: Լրագրներից դեպքեր են ահյունի, յերբ քարածուխի մեջ սերոքսելինի գնդակներ են նետվել, գիտակցորեն փչացվել են շողեմեքենարը, բաց են թողնվել չոգեմեքենաներն առանց կանոնավոր վերանորոգման և այլն: Այս բոլորը մեր այս թշնամիների արարքն ե, վոր կարողացել են սողոսկել տըրանսպորտի մեջ:

Ուստի ինչու ներկայիս ավելի քան յերբյելից անհրաժեշտ ե սրել դասակարգային աշալըռությունն ու ամենայն զգաստությամբ, ուշի-ուշով հետեւինի դասակարգային թշնամու մեթենայություններին: Պետք է ամենաանողոք կոխվ հայտարարել անտեսավալարության, թափթվածության և պոկողականության ամեն տեսակի յերեվույթների դեմ մեր տրանսպորտում: Պետք է հիշել, վոր ամեն տեսակի անկանոնության, անտնորինության ու թափթվածության տակ վնասարարներն հեշտությամբ թագցնում են իրենց իսկական դեմքը: Տրանսպորտում լուծարքի յինթարկելով ձեղքվածքները, մենք հենց դրանով ամուր սեպ խփած կը լինենք վնասարարների գերեզմանին:

Ներկայիս «Խնդիրը կայանում է նրանում, վոր վերացալիս բայլշելիկորեն անցնենք տրանսպորտի գործին ու առաջ տանենք այն»:

ՍՏԱԼԻՆ

Հաստատուն կերպով կրանքի մեջ կիրառելով կուսակցության գլխավոր գիծը, անողոք կերպով կոխվ մղելով ոպորտունիզմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ, տրանսպորտնիկներն ամեն ջանք պիտի գործ դնեն, վորպեսզի, «սոցիալիստական տրանսպորտը կատարի այն առաջադրանքները, վոր դրված են նրան առաջ կուսակցության ու կառավարության կողմից»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բուրժուազիայի ծախութակեյ-ները	3
Վնասարարական կազմակերպություն տրանսպորտում	5
Վնասարարների պլանները	8
Վնասարարների և ոպորտունիտների ծրագրերը	11
Մարտական խնդիրներ տրանսպորտի աշխատանքում	15
Սկելի աչալքություն	19

ՀՀ Ազգային գրադարան



NL0196075

ԳՐԱԾ 10 ԿՈՊ. (3/4 Վ.)



И. МОЛЧАНОВ

ВРЕДИТЕЛИ НА ТРАНСПОРТЕ

Госиздат ССР Армении
Эревань—1931

323 · 2
V - 86